

ԿԱՐԾԻՔ

Հասմիկ Սպարտակի Ղաջոյանի

«Փոխաբերականացման հիմքերը տեխնիկական անգլերենում

/ռադիոէլեկտրոնիկայի և հաշվողական տեխնիկայի տերմինների նյութի

հիման վրա/»

Ժ. 02. 07. - «ՌՈՄԱՆԱԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ
ՀԱՅՑՄԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հասարակական-քաղաքական կյանքի տարբեր բնագավառների աննախընթաց զարգացումը նպաստում է նաև մեր բառապաշարի օրեցօր հարստացմանը: Ի հայտ են գալիս նոր հասկացություններ արտահայտող հազարավոր եզրույթներ, որոնք ստեղծվում են կա՛մ սեփական բառակազմական միջոցներով, կա՛մ փոխառվում են օտար լեզուներից, կա՛մ էլ արդյունք են իմաստափոխության: Եզրութաբանությունը, ինչպես նաև բառապաշարի մյուս ոլորտները, գտնվում է անընդհատ փոփոխման և զարգացման գործընթացների մեջ:

Այս առումով գրախոսվող աստենախոսությունն արդիական է, քանի որ նվիրված է ժամանակակից լեզվաբանության հարաճուն հետաքրքրություններ կայացնող համեմատաբար նոր ճյուղի՝ ռադիոէլեկտրոնիկայի և հաշվողական տեխնիկայի եզրույթներին: Ներկայիս գրեթե բոլոր ոլորտների թվայնացման և առաջադեմ տեխնոլոգիաների զարգացման համատեքստում նման ուսումնասիրությունը խիստ անհրաժեշտ է: Ուստի դիտարկելով գիտական նոր հասկացությունների ստեղծումը որպես լեզվի բառապաշարի հարստացմանը նպաստող գործոն՝ անհրաժեշտություն է առաջանում կատարել նեղ մասնագիտական ուսումնասիրություն, մասնավորապես՝ ռադիոէլեկտրոնիկայի և հաշվողական տեխնիկայի ոլորտներում առկա փոխաբերականացման հիմքով ստեղծված եզրույթների ուսումնասիրություն:

Հասարակական կյանքում անդադար տեղաշարժը, գիտատեխնիկական նորանոր ձեռքբերումները ծնում են նոր եզրույթների ստեղծման, դրանցով տվյալ

լեզվի բառապաշարը և մասնագիտական եզրութաբանությունը համալրելու անհրաժեշտություն: Ուստի բացառություն չեն ռադիոէլեկտրոնիկայի և հաշվողական տեխնիկայի ոլորտները, որտեղ կիրառվող եզրութաբանության զարգացումն ու քննադատումը անխուսափելի են:

Հաշվողական տեխնիկայի բազմահազարանոց եզրութահամակարգը ձևավորվել է վերջին տասնամյակներում, սակայն զարգացման արագությամբ աննախադեպ է: Այս եզրութահամակարգը սպասարկում է ոչ միայն համակարգչային ամենատարբեր ծրագրերին ու դրանց նկարագրմանը, այլև բուն համակարգչային տարրական ու բարձրագույն ուսուցման դասընթացներին, ուսումնական և գիտամեթոդական ձեռնարկներին. այն համարվում է համակարգչի հետ աշխատելու յուրատեսակ ենթալեզու կամ մետալեզու: Հայտնի է, որ եզրութայինները լեզվի բառապաշարի հարստացման կարևորագույն միջոցներից են. դրանք ձևավորվում ու գործածվում են բառակազմական համընդհանուր կաղապարներով՝ ածանցմամբ (նախաածանցում, վերջածանցում, համաածանցում), բառաբարդմամբ (նաև բառակապակցմամբ՝ կայուն ու ազատ) և այլ միջոցներով: Բացի այդ, լեզվի զարգացման տվյալ փուլում եզրութահամակարգերի զարգացմամբ, մշակվածությամբ ու հստակությամբ է որոշվում այդ լեզվի կատարելության մակարդակը: Ժամանակակից լեզուներում եզրութայինների քանակը շատ մեծ է. դրանք միլիոնավոր բառեր ու բառակապակցություններ են:

Հասմիկ Ղաջոյանի քննությունից ակնհայտ է դառնում, որ եզրութաստեղծման փոխաբերական միջոցը եղել է և մնում է չափազանց կենսունակ: Ընդհանուր առմամբ, եզրութաբանական այս կամ այն բնագավառ նոր միավորներով պարբերաբար համալրելու պահանջը և գիտական հասկացություններ անվանելու համար եզրութաբանական նոր միավորների ստեղծման անհրաժեշտությունը բավարարվում են արդեն գոյություն ունեցող բառային միավորների կիրառության հիմնական լեզվի առօրյա գործածական բառերի եզրութացման միջոցով: Այս դեպքում է, որ համագործածական բառապաշարից մասնավոր եզրութաբանություն ներթափանցած բառը, ենթարկվելով փոխաբերականացման, ստանում է եզրութաբանական որոշակի իմաստ: Սույն հետազոտության շրջանակներում փորձ է արվում

փոխաբերականացումը դիտարկել որպես եզրութաստեղծման գործընթացում արդյունավետ միջոց, որի կիրառության արդյունքում լեզվական միավորը, համագործածական բառապաշարից իմաստային փոխակերպման՝ փոխաբերականացման ենթարկվելով, ներթափանցում է մասնավոր եզրութաբանություն՝ ստանալով եզրութային իմաստ և արժեք:

Ատենախոսի կատարած հետազոտության նպատակն է քննել փոխաբերականացումը՝ որպես տեխնիկական եզրութների ստեղծման աղբյուր: Ելնելով աշխատանքի նպատակից՝ լեզվաբանական ուղղվածություն ունեցող նմուշ-օրինակների հիման վրա Հասմիկ Ղաջոյանն ուսումնասիրել է փոխաբերականացման արդյունքում կազմված եզրութները և նրանց դերի կարևորությունը տեխնիկական անգլերենում: Անշուշտ, սա խիստ արդիական խնդիր է, քանի որ տեխնիկայի զարգացմանը զուգընթաց յուրաքանչյուր օր անհրաժեշտություն է առաջանում ստեղծել նոր տեխնիկական եզրութներ:

Ներկայացվող ատենախոսության լեզվական նյութ են ընտրվել զանազան կայքերից ու եզրութաբանական բառարաններից քաղված ռադիոէլեկտրոնիկայի և հաշվողական տեխնիկայի եզրութներ: Արդյունքում ատենախոսը կատարել է ռադիոէլեկտրոնիկայի և հաշվողական տեխնիկայի ոլորտներում փոխաբերականացման արդյունքում ձևավորված եզրութների իմաստային, խոսքիմասային և բառակազմական վերլուծություն ու վեր հանել փոխաբերականացման արդյունքում եզրութ դարձած միավորների տոկոսային հարաբերությունը: Մեթոդաբանական առումով Հ. Ղաջոյանի ուսումնասիրության համար ելակետային է դիտվել բառիմաստային վերլուծության մեթոդի կիրառումը: Հ. Ղաջոյանն իր ուսումնասիրությունը կատարելիս առաջնորդվել է բառիմաստի քննությամբ՝ իմաստաբանական վերլուծության ենթարկելով անգլերեն լեզվի ռադիոէլեկտրոնիկայի և հաշվողական տեխնիկայի եզրութների մեծաթիվ քանակություն՝ նպատակադրվելով պարզել, թե ինչ նշանակություն ունի փոխաբերականացումը նոր եզրութների ստեղծման հիմքում:

Աշխատանքում ռադիոէլեկտրոնիկայի և հաշվողական տեխնիկայի եզրութների նյութի հիման վրա նաև հանգամանորեն ուսումնասիրվում ու

վերլուծվում են եզրույթաբանական տարաբնույթ առանցքային հարցեր և այնպիսի կարևոր երևույթներ, ինչպիսիք են՝ եզրութաբանությունը և եզրութահամակարգերը՝ նպատակ հետապնդելով վեր հանել դրանց դրսևորումներն անզլերեն լեզվի ռադիոէլեկտրոնիկայի և հաշվողական տեխնիկայի եզրույթների շրջանակներում, որոնք այնուհետ, միանշանակ, կօգնեն ավելի լավ հասկանալ տեխնիկական անզլերենի եզրութահամակարգի առանձնահատկությունները:

Աշխատանքի մեթոդաբանական հիմքը եզրութաբանության և փոխաբերականացման մասին տեսությունների ուսումնասիրություններն ու մեթոդներն են: Հիմք ընդունելով այնպիսի լեզվաբանների տեսությունները, ինչպիսիք են Մ. Ա. Բրայսոնը և Մ. Ն. Մյուլդերը՝ ատենախոսը փոխաբերականացման արդյունքում ձևավորված եզրույթները դասակարգել է մարդաբանական (անտրոպոլոգիական) և ոչ մարդաբանական (ոչ անտրոպոլոգիական) խմբերի: Հ. Ղաջոյանը նշում է, որ մարդաբանական խմբին են պատկանում մասնագիտություններ, ազգակցական հարաբերակցություն ցույց տվող բառերն ու մարմնի մասերի անվանումները, իսկ ոչ մարդաբանական խմբին՝ կենդանիների, կենցաղային իրերի, հագուստի, բույսերի կամ էլ վերացական հասկացությունների անվանումները: Ատենախոսը պնդում է, որ փոխաբերականացման արդյունքում եզրույթ դարձած միավորների իմաստն անմիջականորեն կապված է մեզ շրջապատող իրականության, առարկաների և երևույթների արտացոլման հետ:

Վիճակագրական մեթոդի կիրառմամբ Հ. Ղաջոյանը քննության է ենթարկել փոխաբերականացման արդյունքում կազմված եզրույթները խոսքիմասային և բառակազմական մակարդակներում: Ատենախոսը փաստում է, որ հիշյալ եզրույթների գերակշիռ մասը գոյականներ են և կազմվում են ածանցման միջոցով: Ուսումնասիրության արդյունքում ատենախոսը նշում է, որ փոխաբերականացման ներգրավումը գիտական լեզվում հնարավոր չէ բացառել, քանի որ վերջինս նպաստում է առանձին ճյուղերի կազմավորմանն ու նոր տեսությունների ձևավորմանը:

Պետք է նշել, որ ատենախոսությունը տեսակիրառական արժեք ունեցող ամբողջական աշխատանք է: Վերջինս կարող է նպաստել տեխնիկական անզլերենի

դասավանդման արդյունավետությանը: Կարևոր է ռադիոէլեկտրոնիկայի և հաշվողական տեխնիկայի ոլորտների եզրույթների իմաստաբանական առանձնահատկությունների ուսումնասիրությունը: Անկասկած, այս ուսումնասիրությունը կարող է նպաստել բառարանագրության զարգացմանը: Արդյունքում հնարավոր կլինի կազմել տեխնիկական եզրույթների բառարան, որտեղ մանրամասն անդրադարձ կարվի բացառապես փոխաբերականացման արդյունքում ստեղծված եզրույթներին:

Ատենախոսությունն ունի կուռ և տրամաբանական կառուցվածք. այն բաղկացած է ներածությունից, երեք գլխից, համապատասխան ծանոթագրություններից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Ներածության մեջ հիմնավորվում են հետազոտության արդիականությունն ու գիտական նորույթը, պարզաբանվում են նպատակներն ու խնդիրները, նշվում մեթոդաբանական հիմքերն ու կիրառված մեթոդները, ինչպես նաև ներկայացվում է աշխատանքի տեսակիրառական նշանակությունն ու կառուցվածքը:

Առաջին գլխում («Տերմինաբանական հետազոտությունները լեզվաբանության ժամանակակից հարացույցում») ներկայացվում են լեզվաբանների տարաբնույթ դրույթները եզրույթի վերաբերյալ, զուգադրաբար քննարկվում են *եզրույթ* ու *բառ* հասկացությունները, ինչպես նաև նկարագրվում է տեխնիկական եզրույթների առաջացման ու զարգացման ընթացքը: Զուգադրելով *եզրույթ* ու *բառ* հասկացությունները՝ ատենախոսը պատշաճ կերպով ներկայացնում է յուրաքանչյուրին բնորոշ առանձնահատկությունները, ինչպես նաև դիտարկում եզրույթին բնորոշ այնպիսի հատկություններ, ինչպիսիք են մենիմաստությունը, ճշգրտությունը, ոճական չեզոքությունը և հակիրճությունը: Ուսումնասիրելով տեխնիկական եզրույթների առաջացման ու զարգացման ընթացքը՝ Հասմիկ Ղաջոյանը նշում է, որ եզրութաբանական միավորների առաջացումը լեզվում պատահականության արդյունք չէ: Այն պայմանավորված է այնպիսի արտալեզվական գործոններով, ինչպիսիք են որևէ երևույթի բացահայտումը, հասկացության կամ առարկայի ստեղծումը:

Երկրորդ գլխում («Փոխաբերականացումը որպես լեզվական երևույթ») ատենախոսը դիտարկում է փոխաբերությունը՝ որպես փոխաբերականացման դրսևորման հիմնական միջոց, ինչպես նաև անդրադարձ է կատարում փոխաբերականացման արդյունքում ձևավորված եզրույթներին: Այս գլխում ատենախոսը ներկայացնում է նաև տեխնիկական եզրույթների իմաստային առանձնահատկությունները:

Ատենախոսության երրորդ գլխում («Փոխաբերականացումը որպես տեխնիկական տերմինների ստեղծման հիմք») իմաստաբանական, խոսքիմասային և բառակազմական մակարդակներում խորությամբ քննարկվում և մեկնաբանվում են ռադիոէլեկտրոնիկայի և հաշվողական տեխնիկայի ոլորտներում փոխաբերականացման արդյունքում ձևավորված եզրույթները: Հատուկ ուշադրության են արժանի ատենախոսության մեջ զետեղված փաստացի օրինակները, որոնց միջոցով ներկայացվում են փոխաբերականացման արդյունքում ձևավորված եզրույթների իմաստային պատկանելությունը: Ատենախոսը փորձում է ցույց տալ փոխաբերականացման արդյունքում եզրույթ դարձած միավորների աղբյուր տիրույթից թիրախ տիրույթ անցումը, ուղին և արդյունքը: Հասմիկ Ղաջոյանը կարևորում է բառակազմական ձևույթների միջոցով եզրութաբանական բառապաշարի համալրման ու հարստացման գործընթացը, ինչպես նաև ներկայացնում է եզրույթների բառակազմական վերլուծության ու խոսքիմասային պատկանելության վիճակագրական տվյալներ: Գովելի է, որ ատենախոսը համապատասխան օրինակները պատշաճ կերպով քննարկում ու ամփոփում է ինչպես համատեքստում, այնպես էլ աղյուսակների միջոցով, որոնք լեզվական էությունը դարձնում են առավել ընկալելի:

Ընդհանուր առմամբ, բարձր գնահատելով ատենախոսի կատարած մեծածավալ ուսումնասիրությունը, կցանկանայի խոսել մի քանի նկատառումների մասին.

1. Քանի որ սույն աշխատանքում քննության են ենթարկվում փոխաբերականացման արդյունքում ստեղծված ռադիոէլեկտրոնիկայի և հաշվողական տեխնիկայի ոլորտների եզրույթները, ուստի որպես հավելված՝

ցանկալի է առանձին ներկայացնել աշխատանքում քննարկված հաշվողական տեխնիկայի և ռադիոէլեկտրոնիկայի ոլորտների եզրույթների ու բառակապակցությունների ընդհանուր կազմը:

2. Աշխատանքում քննության են ենթարկվել միայն անգլալեզու եզրույթները, թե՛ կան նաև այլ լեզուներից փոխառված եզրույթներ:

3. Աշխատանքում կարելի էր խուսափել օտարաբանությունների (տեղմին, տերմինաբանություն, տերմինաբանական) գործածությունից և կիրառել հայերեն համարժեքները:

Նշված դիտարկումները կրում են մասնակի բնույթ, չեն ազդում կատարած հետազոտության գիտական արժեքի վրա և առավելապես ուղղված են հետագայում կատարվելիք ուսումնասիրություններին:

Հեղինակի կողմից կատարված մեծածավալ հետազոտությունը շարադրված է գրագետ, գիտական լեզվով: Այն հանդիսանում է ավարտուն գիտական աշխատանք: Ատենախոսության հիմնադրույթների գերակշիռ մասը պարունակում է որոշակի գիտական սորույթ և հիմնավորված նոր մտեցումներ: Կարելի է նշել, որ Հ. Ղաջոյանը ամբողջովին կատարել է իր առջև դրված խնդիրները՝ հիմնավոր ներպով ներկայացնելով թեմային առնչվող տեսական և գործնական նյութը:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են 8 գիտական հոդվածներում, իսկ աշխատանքում կիրառվող մտեցումները քննարկվել են ՀԱՊՀ Օտար լեզուների ամբիոնի նիստերում:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը և ներառում է դրա հիմնական դրույթներն ու արդյունքները: Ատենախոսությունը և սեղմագիրը շարադրված են մատչելի լեզվով, դրանց ձևավորումը համապատասխանում է ներկայացվող պահանջներին: Հասմիկ Մպարտակի Ղաջոյանի «Փոխաբերականացման հիմքերը տեխնիկական անգլերենում /ռադիոէլեկտրոնիկայի և հաշվողական տեխնիկայի եզրույթների նյութի հիման վրա/» թեմայով ատենախոսությունն իր արդիականությամբ, գիտական մակարդակով, խնդիրների ընդգրկմամբ, ստացված արդյունքների

հիմնավորվածությամբ և կիրառման հնարավորություններով համապատասխանում է «Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերի, ինչպես նաև ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին: Ատենախոսության հեղինակն արժանի է Ժ.02.07 «Ռոմանագերմանական լեզուներ» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման:

Պաշտոնական ընդդիմախոս,

Վ. Բրյուսովի անվան պետական
համալսարանի Լեզվաբանության
և հաղորդակցման տեսության ամբիոնի
դոցենտ, Բ.գ.դ., պրոֆեսոր



Հրանուշ Թովմասյան

Հ. Թովմասյանի ստորագրությունը հաստատում եմ .

Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի
գիտական քարտուղար



Հասմիկ Փիլավձյան

29.08.2022թ.